

Նուէր մանուկներին. Ք. Սեհմ-Լիերի՝ Ռու. թարգմ. ռուսերէնից: Ս.-Պետեր-  
բուրգ, 1903 թ., զին է 12 կող.:

Այս փոքրիկ պատմուածքը բելետրիստական ձևով մա-  
նումներին ծանօթացնում է բուի կեանքի հետ Բազմաթիւ գե-  
ղեցիկ նկարներ աւելի ևս ախորժեկի են դարձնում փոքրիկ  
ընթերցողների գործը: Տպագրութիւնը շքեղ է, խնամքով, թէև  
զերծ չէ մի քանի վրիպակներից և թարգմանական թերութիւն-  
ներից («աեղաւորուեց» եր. 14, «սկսեց փորեր բուի յետնը» եր.  
16, «կը կըսահարեմ», եր. 18), որոնցից պէտք է խոյս տալ  
մանկական ընթերցանութեան գրքոյկներում: Դինը շատ էժան է:

Na.

«Թասագիրք ընդհանուր աօխարհագրութեան». Մասն Ա. առաջին տա-  
րի. կազմեց Հ. Յովիաննիսկանց:

Ընհանուր աշխարհագրութեան այս դասագրքով անցնում  
են մեր դպրոցների առաջին դասարաններում: Յայտնի է որ  
մինչև այդ դասարանը, աշակերտների մտաւոր հորիզոնը սահ-  
մանափակուած է լինում այն պատրաստականութեամբ միայն,  
ինչ տուել են նրան նախակըթարանների լեզուների և թւա-  
րանութեան դասերը: Մեզ շրջապատող ընութիւնն իր հազար  
ու մի տեսակ փոփոխութիւններով, նրա միջի անթիւ հարըս-  
տութիւնները այդ աշակերտների համար մի անծանօթ երկիր  
է: Ուսուցիչը իր դասերով, հեղին ակը իր դասագրքով պէտք  
է սկզբից սիստեմատիկօրէն ծանօթացնեն աշակերտին իր այդ  
շրջապատի հետ: Դժբախտաբար այս կարևոր կէտը սակաւ ան-  
գամ չէ վրիպում յիշեալ հեղինակի աշքից: Շատերից երկու օ-  
րինակ.

«Այն կէտը, որ գտնում է երկնքում՝ դիտողի գլխին  
ուղղահայեաց, տեսանելի երկնակամարի ամենաբարձր կէտն է  
և կոչուած է զէնիթ, իսկ այն կէտը, որ գտնում է անտեսա-  
նելի երկնակամարի վրայ դիտողի ոտներին ուղղահայեաց՝ նա-  
զիր: Զէնիթը և նազիրը տեսանելի և անտեսանելի երկնակա-  
մարի ամենահեռաւոր և հակադիր կէտերն են» (էջ 6):

Թէ այդ անտեսանելի երկնակամարը և թէ նրա վրայ գըտ-  
նուղ նազիրը հասկանալի չեն կարող լինել աշակերտների համար,  
եթէ նրանք չունենան երկրի գնդաձևութեան գաղափարը: Իսկ

դրա մասին աշակերտներին պիտի յայտնուի 2—3 դասից յետոյ:

Ուրիշ օրինակ. 12-րդ երեսի Զ-րդ գլուխը սկսում է հետևալ տողերով.

«Եթէ երկիրը պատռում է իւր շուրջը, որպէս մի դարձող գնդակ, ուրեմն կարող ենք երևակայել մի տրամագիծ որի շուրջը ևս պատռում է»:

Այստեղից երեսում է, որ հեղինակը իր յետագայ ամբողջ ասելիքը ուզում է հիմնել այն հասկացողութեան վրայ, որ աշակերտները պէտք է ունենային երկրի պատուման մասին: Բայց հարցնում ենք. Թրտեղից կարող էին աշակերտները այդպիսի հասկացողութիւն ունենալ, քանի որ պ. Յովհաննիսեանի դասագրքով անցնող աշակերտները դրանց մասին պէտք է լսէին ուղիղ վեց դասից յետոյ:

Մի ուրիշ պակասութիւն, որ աչքի է ընկնում յիշեալ դասագրքում, դա գաղափարների ոչ ճիշտ ձևակերպումն ողեֆինցիան) է: Հեղինակը խօսում է երկար հորիզոնի, առանցքների, լայնութեան և երկարութեան աստիճանների, հասարակածի մասին, բայց շատ քիչ տեղ է յաջողուել նրան հակիրճ կերպով ձևակերպել այդ գաղափարներից մէկն ու մէկը: Յօդուածիս վերջում բերած մի օրինակից ընթերցողը կը տեսնի, թէ ինչպէս է հեղինակը բացատրում հորիզոնը, իսկ այժմ կարդացէք հասարակածի մասին գրած հետևեալ տողերը.

«Հասարակածը անցնում է երկրի ամենափքուած մասերով և բաժանում է նրան երկու հաւասար կիսազնուերի»:

Այն աշակերտը, որը երկիրը գնդանէ պատկերացնում իրան, նրա համար որմնք են երկրի փքուած մասերը!

Մի քանի տեղերում հեղինակի բացատրութիւնները ուղղակի սխալ են: Օր. 58 երեսում խօսելով մթնոլորտի մասին՝ հեղինակը յայտնում է, որ նա կազմուած է զանազան գաղերից, որոնցից՝

«Մարդուն և կենդանիների համար անհրաժեշտ է թթուածինը և ածխածինը» (յըլերօձք?)

Հեղինակը չգիտէ, որ ոչ միայն օդի մէջ ածխածին չկայ, այլև որ աշխարհիս երեսին ոչ մի տեղ այդ անունով զազ գոյութիւն չունի, ուրիշ բան է ածխաթթու գազը: Նոյն սխալը կրկնուած է և մի ուրիշ տեղ, որ նա ածխածինը համարում է «հեղձուցիչ գազ» (էջ 57):

Այս և սրա նման պակասութիւնները դասատու ուսուցչի կողմից մի կերպ ուղղելի են. սակայն մի բան, որ միանգամայն անմատչելի է դարձնում նրան աշակերտներին, ուս հեղինակի

ծանր լիզում է: Վերը բերած օրինակից երևում է այդ. բերենք ուրիշները.

«Երբ հարթ և ընդարձակ տարածութեան մէջ՝ ծովի թէ ցամաքի վրայ՝ շուրջ ենք դիտում մեր տեսողութիւնը սահմանափակում է մի բոլորագծով, կամ ուրիշ խօսքով՝ մեզ թուում է թէ կանգնած մենք բոլորակի կենտրոնում, որի ծայրերին կը պած է երկնակամարը: Ահա այն բոլորագիծը, որով սահմանափակում է մեր տեսողութիւնը, կամ որով երկինքն ու երկիրը միանում են կոչւում է հորիզոն» (էջ 5—6):

«Եթէ բարձր ափերը շատ կարծր են լինում օրինակ՝ գըրանիտեայ, այն ժամանակ ջուրը՝ հետզհետէ ճեղքելով նրանց ներս է մտնում և նեղ ու երկայն ծոցեր ձևացնում, որոնք նաւարկութեան համար շատ անյարմար են լինում որովհետեւ՝ բացի նեղ լինելուց՝ նոցա յատակում լցուած են լինում ժայռուած ափերից թափթփուած սրածայր քարեր, որոնք հեշտութեամբ ծակում են այնտեղից անցնող նաւերը»:

Այս 3—5 բժինոց նախաղասութիւնները պիտի կարդան առաջին դասատան աշակերտները, հասկանան և իրանց խօսքը որով պատմեն ուսուցչին!||

### ՅԱԿ. ՅՈՎՀ.

Պ. Փափագեան՝ «Լուր-դա-լուր», քրդական պոէմա, Բագու, 1903 թ., գիրն է 3 կոպէկ:

Հուր-դա-լուրը՝ հասարակ, բայց սիրուն աւանդութիւն մըն է: Հովիւ Հասօն՝ «Երկրի սիրուն և բաջ պատանին» կը տեսնէ օր մը իր աղային մէկ հատիկ աղջիկը՝ Զալիսէն ու կը սիրահարուի: Մէրը՝ հաւասարապէս երկուքին ալ սրտին մէջ բոյն կը դնէ: Հասօն՝ իր նախկին աշխուժութիւնն ու զուարթութիւնը կը կորցնէ, ու կու գայ յաճախ թափառիլ սիրականը բանտարկուած պալատին առաջ: Հասօն՝ սրինդ ածել շատ լաւ գիտէ: Ու այդ միամիտ սիրահարը՝ հովւական սերենադներ կու տայ Զալիկին համար:

Խորամանկ աղան բանը կ'իմանայ: Կը բարկանայ, կը կատղի, բայց կը վճռէ ամեն ինչ խոհեմութեամբ կարգադրել: Կը կանչէ հովւին իր մօտ:

«Գիտեմ, Հասօ, ասաց չար աղան—գիտեմ, որ սիրում ես իմ աղջկան: Դու քաջ տղայ ես. լսել եմ լաւ սրինդ էլ ածում ես: Աղջիկս քեզ կը տամ, միայն կը դնեմ մի պայման: Լսել